

MASTERTILE WP 667 PT (MASTERSEAL 567)

Կիսաճկուն, երկբաղադրիչ ջերմամեկուսիչ նյութ



Բնութագրություն

MASTERTILE WP 667 PT-ը ակրիլով հագեցած ցեմենտի հիմքով երկբաղադրիչ անջրանցիկ ծածկույթ է: Կիրառվում է շինությունների ներսի և դրսի բետոնե և սվաղված մակերևույթների վրա, պաշտպանում է հոսող, մակերևութային ջրերից և խոնավությունից: Նյութը հեշտությամբ պատվում է մազային վրձնի, գլանիկի (валник) կամ ծեփիչի օգնությամբ և գոյացնում է կիսաճկուն, անջրանցիկ, անկար, դժվար մաշվող մեմբրան: Նյութը գոյացնում է արդյունավետ արգելապատնեջ ջրում պարունակվող աղերի և մթնոլորտային գազերի դեմ:

Կիրառման ոլորտ

- շինությունների ներսի և դրսի ուղղահայաց ու հորիզոնական մակերևույթներ,
- շենքերի և շինությունների հիմքերի ու նկուղների ջերմամեկուսացում,
- տերասներ, ծաղկանոցներ և ջերմոցներ (պարտադիր մակերևութային պաշտպանությամբ),
- «խոնավ շինություններ» (բաղնիքներ, սանհանգույցներ, խոհանոցներ և պատշգամբներ),
- լողավազաններ, ջրի պահեստարաններ:

Առավելություններ

- անջրանցիկություն - դիմադրություն մինչև 2 բար (20մ-անոց ջրային սյան ճնշում) ճնշմանը,
- պատրաստման և կիրառման մեջ պարզություն, չի պահանջում հատուկ ունակություններ, պատվում է վրձնի, գլանիկի (валник) կամ փոշեցիրի օգնությամբ,
- գործելու երկարատև ժամկետ,
- առաջացնում է անկար անջրանցիկ մեմբրան,
- չի կնճռտվում և չի ճաքճքում,

- պատվող մակերևույթի վրա ծածկում է մանր ճաքերը,
 - կայուն է բնահողում պարունակվող քիմիկատների և աղերի նկատմամբ,
 - կարող է կիրառվել վիթրացիայի ենթարկվող վայրերում,
 - ջերմաստիճանային ցիկլերի (սառեցում/հալում) հանդեպ կայունություն,
 - բարձր հարակցումը (ադիզիան) հախճաասալի և սվաղի տակ առաջացնում է գերազանց մեմբրան,
 - անվտանգություն՝ խմելու ջրի հետ կոնտակտի դեպքում:
- Առկա է BS 6920 ստանդարտի պահանջներին համապատասխան Քիմիական Վերլուծության Լաբորատորիայի վերլուծությունը:



Կազմը

MASTERTILE WP 667 PT-ը բաղկացած է հատուկ ընտրված ցեմենտից, սիլիկատային ավազից և մոդիֆիկացված պոլիմերային հավելանյութերից՝ փոշու տեսքով, ինչպես նաև հեղուկ բաղադրիչից, որն իրենից ներկայացնում է ակրիլային համապոլիմերային և հեղուկ ազդակի խառնուրդ:

Մոտավոր ծախս

Առաջին շերտ՝ 1.2 կգ/մ²
Երկրորդ շերտ՝ 1 կգ/մ²
Երրորդ շերտ՝ 1 կգ/մ²

Կիրառման եղանակ

Չիմքի պատրաստում **MASTERTILE WP 667 PT**-ով պատվող մակերևույթը պետք է լինի չոր, հնարավորինս հարթ և մաքուր: Խորհուրդ է տրվում մանրամասն մաքրել մեքենաների յուղերի, ճարպերի, բետոնի վուլկանիզացման

նյութերի, լցունման արդյունքում առաջացած քիմիական ազդակների և մնացած այլ կեղտոտ մասնիկների ցանկացած մնացորդներ: Խորհուրդ է տրվում հեռացնել կեղտերը օդի կամ ջրի թեթև շիթի օգնությամբ: Փոքր տարածքների համար հնարավոր է մետաղական խոզանակի կիրառում: Մակերևույթի դատարկ մասերն ու ճաքերը պետք է փակել այնպիսի հատուկ վերանորոգիչ շաղախներով, ինչպիսիք են **MASTERSEAL 590-ը**, **MASTEREMACO S 88 C-ը** կամ **MASTEREMACO N 90-ը**: Խորհուրդ է տրվում փխրուն բետոնը հեռացնել մինչև ամուր բետոնին հասնելը և այն վերականգնել վերանորոգիչ շաղախով (**MASTEREMACO S 88 C** կամ **MASTEREMACO N 90**): Մինչև կիրառելը մակերևույթը խոնավեցնում են մաքուր ջրով այն աստիճանի, որ խոնավությունը տեսանելի դառնա, սակայն ջրի կուտակում չզոյանա:

Պատրաստում` Նյութը մատակարարվում է նախապես փաթեթավորված մասերով: B հեղուկ կոմպոնենտը (**MASTERTILE WP 667 PT**) լցվում է մաքուր դույլի մեջ, A չոր կոմպոնենտը (**MASTERTILE WP 667 PT**) դանդաղ դատարկվում է և 400-600 պտույտներով 3-5 րոպե միքսերով խառնվում մինչև առանց կոշտուկների համասեռ շաղախի ստացումը: Շաղախը պետք է թողնել սառչի 3-5 րոպե և նորից խառնել 30 վայրկյանի ընթացքում մինչև վերջինիս վերջնական պատրաստ լինելը:

Խառնուրդի հարաբերակցություն`

MASTERTILE WP 667 PT	A	B
	բաղադրիչ	բաղադրիչ
Խառնուրդի քանակություն	20 կգ	5 կգ
Խառնուրդի խտություն	1.9 կգ/լ	

Կիրառում` **MASTERTILE WP 667 PT-ը** պատվում է կարճ մազե վրձնի կամ գլանիկի (валик) օգնությամբ: Անհրաժեշտության դեպքում պատումը հնարավոր է ծեփիչի օգնությամբ: Խորհուրդ է տրվում նյութի պատում երկու կամ երեք շերտով՝ կախված անհրաժեշտ հաստությունից: Յուրաքանչյուր հաջորդ շերտ պետք է պատել նախորդի չորանալուց հետո, ընդ որում շերտերը պետք է պատվեն միմյանց նկատմամբ ուղղահայաց: 1000 մ²-ուց ավել տարածքների համար խորհուրդ է տրվում փոշիացման համակարգի կիրառում:

Օգտակար տեղեկատվություն

- կիրառել **MASTERTILE WP 667 PT-ը** +5°C-ից +25°C ջերմաստիճանային պայմաններում: Խորհուրդ չի տրվում նյութը կիրառել անձրևոտ կամ քամոտ եղանակին,
- նյութը ձեռք է բերում մեխանիկական ամրություն 2 օրվա ընթացքում, անջրանցիկությունը՝ 7 օրվա ընթացքում և վերջնական ամրությունը՝ 14 օրվա ընթացքում,
- արտաքին կիրառման դեպքում խորհուրդ է տրվում մակերևույթը պաշտպանել արևի ճառագայթներից, քամուց, անձրևից և սառչելուց կիրառումից հետո առաջին օրերի ընթացքում,
- հետիոտնային բեռնվածության դեպքում ջերմամեկուսացումը հարկավոր է ծածկել հախճասալով կամ սվաղով:

Փաթեթավորում

A բաղադրիչ՝ 20կգ-անոց պարկեր
B բաղադրիչ՝ 5կգ-անոց թիթեյա տարաներ (թիթեղամաններ)

Պահպանման պայմաններ

Նյութը խորհուրդ է տրվում պահել արևի ճառագայթներից հեռու, գետնից բարձր դիրքում պալետների վրա, պաշտպանված տեղումներից և խոնավությունից: Նյութը պահեստավորելիս թույլ չտալ ինտենսիվ դասավորում:

Տեխնիկական բնութագրեր

Գույնը	նոխրագույն
Խտություն	1.9 կգ/լ
Ջրանցիկություն (DIN 1048)	2 բար – ջրային սյան 20մ
Խզման (отрыв) ուժ	1.5 Ն/մմ ² (28 օր հետո)
Կապիլյար ջրակլանում (EN 12808-5)	≤ 0.10 գր. (4 ժամ հետո)
Մշակվող մակերևույթի ջերմաստիճան	+5°C-ից +25°C
Շահագործման տիրույթ	-20°C-ից +80°C
Թարմ պատրաստված շաղախի նստվածքի առաջացման ժամանակահատված	3-5 րոպե
Թարմ պատրաստված շաղախի հետ աշխատելու ժամանակահատված	2 ժամ
Մինչև պատրաստ լինելը հասունացման ժամանակահատված	2 օր
Մեխանիկական դիմադրություն	7 օր
Ջերմամեկուսացում	
Պատում հաջորդող մակերևույթների վրա	
Սվաղ	3 օր հետո
Կերամիկա	3 օր հետո